

# ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՍՈՒԹՅՈՒՆ

2021

## ՖԻԶԻԿԱ

### ԹԵՍ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

#### Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե զեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Զեր առջև դրված թեստ-զրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-զրքույկը չի սոուզվում: Սոուզվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթուղթում: Պատասխանների ձևաթուղթի ճիշտ լրացումից է կախված Զեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

1

Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Մեխանիկայի հիմնական խնդիրը ...

- 1) մարմնի անցած ճանապարհը գտնելն է:
- 2) մարմնի վրա ազդող ուժերը պարզելն է:
- 3) մարմնի դիրքը տարածության մեջ ժամանակի կամայական պահին որոշելն է:
- 4) մարմնի շարժման պատճառը պարզելն է:

2

Մարմնի շարժումն արտահայտվում է  $x = 5 - 3t$  հավասարումով, որտեղ մեծությունները ներկայացված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Որքա՞ն է նրա կոորդինատը ժամանակի 3 վ պահին:

- 1)  $-9$  մ:
- 2)  $15$  մ:
- 3)  $9$  մ:
- 4)  $-4$  մ:

3

Դեպի ներքև ուղղված  $a$  արագացմամբ իջնող ուղղաթիռից դուրս նետած մարմինը Երկրի նկատմամբ ի՞նչ արագացմամբ կշարունակի իր շարժումը: Օղի դիմադրությունն անտեսել:

- 1)  $g$ :
- 2)  $a + g$ :
- 3)  $a - g$ :
- 4)  $a$ :

4

Ինչպե՞ս կփոխվի հավասարաչափ շրջանագծային շարժում կատարող մարմնի կենտրոնաձիգ արագացման մոդուլը, եթե արագության մոդուլը մեծանա 2 անգամ:

- 1) Կփոքրանա 4 անգամ:
- 2) Կմեծանա 2 անգամ:
- 3) Կփոքրանա 2 անգամ:
- 4) Կմեծանա 4 անգամ:

5

Ինչպե՞ս կշարժվի մարմինը հաշվարկման իներցիալ համակարգում, եթե ժամանակի որևէ պահից սկսած՝ նրա վրա ազդող բոլոր ուժերի համազորը հավասարվի զրոյի:

- 1) Ակնթարթորեն կանգ կառնի:
- 2) Կշարունակի շարժվել այդ պահին ունեցած արագությամբ:
- 3) Կկատարի հավասարաչափ դանդաղող շարժում:
- 4) Կշարունակի շարժվել նախկին արագացմամբ:

6

Ո՞րն է զսպանակի կոշտության միավորը:

- 1) 1 կգմ:
- 2) 1 Ն/մ:
- 3) 1 Ն/կգ:
- 4) 1 Ն/մ<sup>2</sup>:

7

Որքա՞ն է  $m$  զանգվածով տղայի կշիռը դեպի ներքև ուղղված  $a$  արագացումով շարժվող վերելակում ( $a < g$ ):

- 1)  $P = m(a - g)$ :
- 2)  $P = mg$ :
- 3)  $P = m(g - a)$ :
- 4)  $P = m(g + a)$ :

8


Մարմնի վրա մի կետում կիրառված են  $F$  մոդուլով երեք ուժեր, որոնք մի հարթության մեջ են և միմյանց հետ կազմում են  $120^\circ$  անկյուն: Որքա՞ն է այդ ուժերի համագորք:

- 1)  $0$ :
- 2)  $3F$ :
- 3)  $2F$ :
- 4)  $F$ :

9

Լծակի վրա ազդում է երկու ուժ, որոնց բազուկները  $d_1$  և  $d_2$  են: Կարճ բազուկի վրա ազդող ուժը  $\bar{F}_1$  է: Որքա՞ն է երկար բազուկի վրա ազդող ուժը, եթե լծակը հավասարակշռության վիճակում է:


- 1)  $\frac{d_2}{F_1 d_1}$ :
- 2)  $\frac{F_1 d_1}{d_2}$ :
- 3)  $(F_1 + F_2) \frac{d_1}{d_2}$ :
- 4)  $\frac{d_1}{F_1 d_2}$ :



10

Նկարում պատկերված գնդերից ո՞րն է կայուն հավասարակշռության վիճակում:

- 1) Բոլոր գնդերը:
- 2) A գունդը:
- 3) B գունդը:
- 4) C գունդը:



11

Նշված միավորներից ո՞րն է աշխատանքի չափման միավորը ԱՀ-ում:

- 1) 1 Պլա:
- 2) 1 Ջ:
- 3) 1 Վտ:
- 4) 1 Ն:

12

Ժամանակի ընթացքում ինչպե՞ս է փոխվում մարմնի կինետիկ էներգիան, եթե այն կատարում է շրջանագծային հավասարաչափ շարժում:

- 1) Պարբերաբար փոփոխվում է:
- 2) Մեծանում է:
- 3) Փոքրանում է:
- 4) Մնում է նույնը:

13

Ինչո՞վ է պայմանավորված մարմնի պոտենցիալ էներգիան:

- 1) Իներտությամբ:
- 2) Շարժմամբ:
- 3) Փոխազդեցությամբ:
- 4) Խտությամբ:

14

Ո՞ր մեծությունն է կոչվում մարմնի իմպուլս:

- 1) Մարմնի զանգվածի և արագացման արտադրյալը:
- 2) Մարմնի զանգվածի և ծավալի հարաբերությունը:
- 3) Մարմնի զանգվածի և արագության արտադրյալը:
- 4) Ուժի և նրա ազդման ժամանակի արտադրյալը:

15

Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Ուժի իմպուլսը հավասար է...

- 1) մարմնի զանգվածի փոփոխությանը:
- 2) մարմնի արագության փոփոխությանը:
- 3) մարմնի իմպուլսին:
- 4) մարմնի իմպուլսի փոփոխությանը:

16

Ինչպե՞ս կփոխվի հեղուկի հիդրոստատիկ ճնշումը անոքի հատակին, եթե հեղուկի սյան քարձրությունը մեծացնենք 4 անգամ:

- 1) Կմնա նույնը:
- 2) Կմեծանա 16 անգամ:
- 3) Կմեծանա 4 անգամ:
- 4) Կմեծանա 2 անգամ:

17

Ո՞րն է  $\rho_1$  և  $\rho_2$  խտությամբ հեղուկների մակերևույթներին լողալիս նույն մարմնի ընկղղմած  $V_1$  և  $V_2$  ծավալների ճիշտ հարաբերակցությունը:

- 1)  $\frac{V_1}{V_2} < \frac{\rho_1}{\rho_2}$ :
- 2)  $\frac{V_1}{V_2} = \frac{\rho_1}{\rho_2}$ :
- 3)  $\frac{V_1}{V_2} = \frac{\rho_2}{\rho_1}$ :
- 4)  $\frac{V_1}{V_2} > \frac{\rho_1}{\rho_2}$ :

18

Ո՞ր մեծությունն է կոչվում տատանումների պարբերություն:

- 1) Մարմինը հավասարակշռության դիրքից շեղման ժամանակը:
- 2) Մեկ տատանման ժամանակը:
- 3) Սիավոր ժամանակում տատանումների թիվը:
- 4) Տատանումների մարման ժամանակը:

19

Ինչպե՞ս կփոխվի մաքենատիկական ճռճանակի ներդաշնակ տատանումների հաճախությունը, եթե նրա զանգվածը մեծացնենք 4 անգամ:

- 1) Կմնա նույնը:
- 2) Կմեծանա 4 անգամ:
- 3) Կմեծանա 2 անգամ:
- 4) Կփոքրանա 4 անգամ:

20


Ո՞ր պնդումն է մոլեկուլային-կինետիկ տեսության հիմնադրույթ:

- 1) Բոլոր մասնիկների միջև գործում են գրավիտացիոն ուժեր:
- 2) Մոլեկուլների քառսային շարժման հետևանքով նյութերը ինքնաբերաբար խառնվում են իրար:
- 3) Մարմինը կարելի է բաժանել անվերջ փոքր կտորների:
- 4) Բոլոր նյութերը կազմված են մասնիկներից:

21

Նկարում պատկերված գրաֆիկներից ո՞րն է նկարագրում հաստատուն զանգվածով իդեալական գազի իզոբերմ պրոցես:

- 1)  $\eta$ :
- 2)  $w$ :
- 3)  $p$ :
- 4)  $q$ :



22

Ինչպե՞ս է փոխվում հաստատուն զանգվածով իդեալական գազի խտությունը իզոբար տաքացման դեպքում:

- 1) Իդեալական գազի խտությունը զրոն է:
- 2) Մեծանում է:
- 3) Փոքրանում է:
- 4) Չի փոխվում:

23

Հաստատուն  $p$  ճնշման պայմանում իդեալական գազն ընդարձակվում է  $V_1$ -ից մինչև  $V_2$  ծավալը: Ի՞նչ աշխատանք է կատարում գազը:

- 1)  $A = p\sqrt{V_1 V_2}$ :
- 2)  $A = p(V_2 - V_1)$ :
- 3)  $A = p(V_1 - V_2)$ :
- 4)  $A = p \frac{V_1 + V_2}{2}$ :

24

Ի՞նչ միավորով է չափվում մարմնի ջերմունակությունը միավորների ՄՀ-ում:

- 1) 1 Օ/Կ:
- 2) 1 Օ:
- 3) 1 Օ/(կգԿ):
- 4) 1 Օ/կգ:

25

Ո՞ր բանաձևն է արտահայտում ջերմային մեքենայի ջեռուցիչի տված  $Q_1$  և սառնարանին հաղորդված  $Q_2$  ջերմաքանակների կապը, եթե ջերմային մեքենայի **ՕԳԳ-ն** է:

- 1)  $Q_2 = (1 + \eta)Q_1$ :
- 2)  $Q_1 = (1 - \eta)Q_2$ :
- 3)  $Q_2 = (1 - \eta)Q_1$ :
- 4)  $Q_1 = (1 + \eta)Q_2$ :

26

Ասումի ո՞ր մասնիկներն են օժտված տարրական լիցքով:

- 1) Սիայն պրոտոնները:
- 2) Էլեկտրոններն ու պրոտոնները:
- 3) Էլեկտրոններն ու նեյտրոնները:
- 4) Սիայն էլեկտրոնները:

27

Ո՞րն է վակուումում  $q_0$  մոդուլով անշարժ կետային լիցքի էլեկտրական դաշտի լարվածության  $E$  մոդուլի բանաձևը:

- 1)  $E = \frac{q_0^2}{r^2}$ :
- 2)  $E = k \frac{q_0}{r}$ :
- 3)  $E = k \frac{q_0}{r^2}$ :
- 4)  $E = k \frac{q_0^2}{r}$ :

28

Երկու տարբեր չափերով հաղորդիչ գնդերը լիցքավորում են և իրար միացնում հաղորդալարով: Լիցքերը վերաբաշխվելուց հետո ո՞ր գնդի պոտենցիալը կլինի ավելի մեծ:

- 1) Պատասխանը կախված է միացումից առաջ գնդերի ունեցած լիցքերից:
- 2) Մեծ գնդինը:
- 3) Երկու գնդերի պոտենցիալները կլինեն հավասար:
- 4) Փոքր գնդինը:

29


Ինչպե՞ս են մետաղում շարժվում էլեկտրոնները էլեկտրական դաշտի առկայությամբ:

- 1) Բոլոր պատասխանները ճիշտ են:
- 2) Կատարում են անկանոն, քասային շարժում:
- 3) Կատարում են ուղղորդված, կարգավորված շարժում:
- 4) Զերմային շարժման հետ մեկտեղ կատարում են ուղղորդված, կարգավորված շարժում:

30

Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը: Միացնող հաղորդակարերի դիմադրությունն անտեսել:

- 1)  $0$ :
- 2)  $2R$ :
- 3)  $R$ :
- 4)  $\frac{R}{2}$ :



31

Ինչո՞ւ զերմաստիճանը բարձրացնելիս էլեկտրոլիտի հաղորդականությունը մեծանում է:

- 1) Վերամիավորման հետևանքով փոքրանում է իոնների կոնցենտրացիան:
- 2) Մեծանում է էլեկտրոլիտի խտությունը:
- 3) Աճում է դիստուման հետևանքով առաջացած իոնների կոնցենտրացիան:
- 4) Աճում է իոնների զերմային շարժման միջին կինետիկ էներգան:

32


Ո՞ր դեպքում է շարժվող լիցքավորված մասնիկի շուրջ առաջանում մազնիսական դաշտ:

- 1) Ω<sub>z</sub> մի դեպքում:
- 2) Սիայն այն դեպքում, երբ մասնիկը շարժվում է արագացումով:
- 3) Սիայն այն դեպքում, երբ մասնիկը շարժվում է հավասարաչափ:
- 4) Մասնիկի կամայական շարժման դեպքում:

33

Պղնձե օղակի մոտ, նրա մակերևույթին ուղղահայաց տեղադրված է հաստատուն մազնիս, ինչպես ցույց է տրված նկարում: Առաջին դեպքում օղակը շարժում են դեպի ներքև, իսկ երկրորդ դեպքում՝ դեպի աջ: Ո՞ր դեպքում օղակում կմակածվի հոսանք:

- 1) Ω<sub>z</sub> մի դեպքում:
- 2) Սիայն առաջին դեպքում:
- 3) Սիայն երկրորդ դեպքում:
- 4) Երկու դեպքում էլ:



34

Տատանողական կոնտուրում տեղի են ունենում չմարող էլեկտրամագնիսական տատանումներ: Ժամանակի ընթացքում ո՞ր մեծությունն է մնում անվտանգության:

- 1) Կոճի մագնիսական դաշտի և կոնդենսատորի էլեկտրական դաշտի էներգիաների գումարը:
- 2) Կոնդենսատորի լիցքը:
- 3) Կոնդենսատորի էլեկտրական դաշտի լարվածությունը:
- 4) Կոճի մագնիսական դաշտի էներգիան:

35

Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Լույսի կետային աղբյուրից հարք հայելու վրա ընկնող ճառագայթներն...

- 1) ընդհանրապես չեն անդրադառնում:
- 2) անդրադառնում են՝ հատվելով մի կետում:
- 3) անդրադառնում են՝ մնալով իրար գուգահեռ:
- 4) անդրադառնում են այնպես, որ դրանց շարունակությունները հատվում են մի կետում:

36

Հավաքող բարակ ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ պետք է տեղադրել առարկան, որպեսզի նրա պատկերը լինի կեղծ:

- 1) Ցանկացած հեռավորությամբ պատկերը կլինի կեղծ:
- 2) Կիզակետային հեռավորությունից մեծ հեռավորությամբ:
- 3) Կիզակետային հեռավորությունից փոքր հեռավորությամբ:
- 4) Ցանկացած հեռավորությամբ պատկերը կլինի իրական:

37

Ո՞ր երևույթն է բացատրվում լույսի ռիֆրակցիայով:

- 1) Ապակե հատվածակողմից անցնելիս սպիտակ լույսի տարալուծումը տարբեր գույների:
- 2) Բարակ թաղանթների գումավորումը:
- 3) Ստվերի և կիսաստվերի առաջացումը:
- 4) Լույսի ճառագայթների շեղումը դեպի երկրաչափական ստվերի տիրույթ:

38

Ինչի՞ց է կախված լույսի ազդեցությամբ մետաղից պոկվող էլեկտրոնների ելքի աշխատանքը:

- 1) Մետաղի տեսակից:
- 2) Ընկնող լույսի հաճախությունից:
- 3) Ընկնող լույսի ուժգնությունից:
- 4) Պոկված էլեկտրոնների կինետիկ էներգիայից:

39

Ասոմը  $E_3$  էներգիական մակարդակից  $E_1$  մակարդակն անցնելիս ճառագայթում է  $\nu_1$  հաճախության ֆոտոն, իսկ  $E_2$ -ից  $E_1$  մակարդակն անցնելիս՝  $\nu_2$  հաճախությամբ ֆոտոն: Ի՞նչ հաճախության ֆոտոն կճառագայթի ասոմը  $E_3$  մակարդակից  $E_2$  մակարդակն անցնելիս:

- 1)  $\frac{\nu_1 - \nu_2}{2}$ :
- 2)  $\nu_1 + \nu_2$ :
- 3)  $\nu_1 - \nu_2$ :
- 4)  $\frac{\nu_1 + \nu_2}{2}$ :

40

Ի՞նչ մասնիկ առաքեց ասոմի միջուկը, եթե դրա հետևանքով զանգվածային թիվը պակասեց մեկով, իսկ կարգաբիշը չփոխվեց:

- 1) Ֆոտոն:
- 2) Պրոտոն:
- 3) Նեյտրոն:
- 4) Էլեկտրոն:

41

Միջուկային ռեակցիայի ժամանակ միջուկը կլանում է մեկ այրոտոն և ճառագայթում  $\alpha$ -մասնիկ: Որքանո՞վ է փոքրանում միջուկի զանգվածային թիվը:

42

12 մ/վ արագությամբ հավասարաչափ շարժվող մեքենան նույն ճանապարհն անցավ 10 վ-ում, իսկ երկրորդը՝ 15 վ-ում: Որքա՞ն է հավասարաչափ շարժվող երկրորդ մեքենայի արագությունը:

43

Որքա՞ն է ածխաբթու գազի 2500 մոլի գանգվածը: Ածխաբթու գազի մոլային գանգվածը  $44 \cdot 10^{-3}$  կգ/մոլ է:

44

Երկու միևնույն չափի մետաղե գնդիկներ ունեն – 3 նԿլ և 9 նԿլ լիցքեր: Որքա՞ն կլինի գնդիկներից յուրաքանչյուրի լիցքը, եթե նրանք հալենք իրար և նորից հեռացնենք:  
Պատասխանը բազմապատկել  $10^9$ -ով:

(45-46) Լույսի ամենափոքր հաճախությունը, որի դեպքում մետաղից էլեկտրոն է պոկվում,  
 $6 \cdot 10^{14}$  Հց է: Պլանկի հաստատունը  $6,6 \cdot 10^{-34}$  Ջ.Վ է, էլեկտրոնի լիցքի մոդուլը՝  
 $1,6 \cdot 10^{-19}$  Կլ:

45

Որքա՞ն է մետաղի ելքի աշխատանքը: Պատասխանը բազմապատկեք  $10^{21}$ -ով:

46

Ի՞նչ առավելագույն հաճախության դեպքում մետաղից պոկված էլեկտրոնները լրիվ կարգելակվեն  $3,3 \times 10^{-14}$ - ով:

(47-48) 2 կգ զանգվածով մարմինը դադարի վիճակից հաստատուն համազոր ուժի ազդեցությամբ 5 վ-ում անցնում է 25 մ ճանապարհ:

47

Որքա՞ն է մարմնի շարժման արագացումը:

48

Որքա՞ն է մարմնի վրա ազդող համազոր ուժը:

(49-50) 1000 Ջ/կգ.Կ տեսակարար ջերմունակություն ունեցող 0,4 կգ զանգվածով գազը 10 Կ-ով տաքացնելիս նրա ներքին էներգիան աճեց 1000 Ջ-ով:

49 Ի՞նչ ջերմաքանակ է հաղորդվել զազին:

50 Որքա՞ն է զազի կատարած աշխատանքը:

(51-52)  $4 \cdot 10^{-3}$  մ<sup>2</sup> մակերեսով և 4 Օմ դիմադրությամբ հարթ շրջանակը տեղադրված է համաստու մազնիսական դաշտում այնպես, որ շրջանակի հարթությունն ուղղահայաց է մազնիսական ինդուկցիայի վեկտորին: Մազնիսական դաշտը նվազում է  $2 \cdot 10^3$  Տլ/վ հաստատուն արագությամբ:

51 Որքա՞ն է շրջանակում մակաձված ԷլՇՈւ-ն:

52

Որքա՞ն է շրջանակով անցնող հոսանքի ուժը:

- (53-54) Առարկայի հեռավորությունը հավաքող բարակ ոսպնյակից 0,3 մ է, իսկ նրա իրական պատկերի հեռավորությունը ոսպնյակից՝ 0,6 մ:

53

Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկեր 10-ով:

54

Որքա՞ն է պատկերի խոշորացումը:

(55-57) Մարտկոցի ԷլՇՈւ-ն 24 Վ է, իսկ ներքին դիմադրությունը՝ 1 Օմ: Շղբան փակված է 11 Օմ արտաքին դիմադրությամբ:

55 Որքա՞ն է հնսանքի ուժը շղթայում:

56 Որքա՞ն է շղթայի արտաքին տեղամասում լարման անկումը:

57 Որքա՞ն է ներքին դիմադրության վրա լարման անկումը:

(58-60) Մասնիկի տատանումները նկարագրվում են  $x = x_0 \cos(\omega t + \varphi_0)$  բանաձևով, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Տատանումների շրջանային հաճախությունը 4 ռադ/վ է: Ժամանակի որոշակի պահին մասնիկի կոորդինատը 0,25 մ է, իսկ արագության պրոյեկցիան՝ -1 մ/վ:

58

Որքա՞ն է մասնիկի կոորդինատն այդ պահից հաշված  $\pi/16$  վ անց:

59

Որքա՞ն է մասնիկի տատանման լայնութը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:  
Ընդունել՝  $\sqrt{2} = 1,4$ :

60

Որքա՞ն է մասնիկի արագության պրոյեկցիայի մոդուլն այդ պահից հաշված  $\pi/16$  վ անց: Պատասխանը բազմապատկել 10-ով: Ընդունել՝  $\sqrt{2} = 1,4$ :

- (61-64) Առարկան և ցրող բարակ ոսպնյակում նրա պատկերը համաչափ էն դասավորված ոսպնյակի կիզակետի նկատմամբ: Առարկայի հեռավորությունը կիզակետից  $0,05$  մ է: Ընդունել՝  $\sqrt{2} = 1,4$ :

61 Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորության մոդուլը: Պատասխանը բազմապատկեք  $10^2$ -ով:

62 Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկեք  $10^2$ -ով:

63

Որքա՞ն է առարկայի պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկեք  $10^2$ -ով:

64

Որքա՞ն է առարկայի բարձրությունը, եթե պատկերի բարձրությունը 0,07 մ է: Պատասխանը բազմապատկեք  $10^2$ -ով:

(65-68) Անոքում կան միմյանց հետ չխառնվող 1000 կգ/մ<sup>3</sup> և 13000 կգ/մ<sup>3</sup> խտություններով երկու հեղուկներ: Վերևում գտնվող հեղուկի շերտի հաստությունը 9,6 սմ է: Հեղուկի ազատ մակերևույթից, առանց սկզբնական արագության սկսում է անկում կատարել 4000 կգ/մ<sup>3</sup> խտությամբ փոքրիկ գնդիկը: Գնդիկի վրա ազդող դիմադրության ուժերն անտեսել:

65 Որքա՞ն է գնդիկի արագացումն առաջին հեղուկում: Պատասխանը բազմապատկել 10-ով:

66 Որքա՞ն է գնդիկի արագությունը հեղուկների բաժանման սահմանին: Պատասխանը բազմապատկել 10-ով:

67

Որքա՞ն է գնդիկի արագացման մոդուլը երկրորդ հեղուկում: Պատասխանը բազմապատկել 10-ով:

68

Որքա՞ն պետք է լինի երկրորդ հեղուկի շերտի հաստությունը, որ գնդիկն անոթի հիմքում կանգ առնի: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:

69

$v_0$  արագությամբ շարժվող  $m$  զանգվածով գունդը բախվում է նոյն զանգվածով անշարժ գնդին և նրա հետ շարժվում համատեղ: Հաստատեք կամ ժխտեք հետևյալ պնդումները:

1. Բախման հետևանքով սկզբնական կինետիկ էներգիայի կեսը փոխակերպվում է գնդերի ներքին էներգիայի:
2. Հարվածի հետևանքով համակարգի ընդհանուր իմպուլսը չի փոխվում:
3. Բախումից հետո գնդերը շարժվում են  $v_0/2$  արագությամբ:
4. Բախումից հետո համակարգի իմպուլսը  $2mv_0$  է:
5. Բախման արդյունքում համակարգի մեխանիկական էներգիան չի փոխվում:
6. Բախումից հետո համակարգի ընդհանուր կինետիկ էներգիան  $mv_0^2/4$  է:

70

Ենդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում տեղադրված  $I$  երկարությամբ հաղորդիչը, որով անցնում է I հոսանք: Հաստատեք կամ ժխտեք հետևյալ պնդումները:

1. Ինդուկցիայի գծերին ուղղահայաց տեղադրված հաղորդիչը ինդուկցիայի գծերի ուղղությամբ  $\vec{S}$  տեղափոխության դեպքում Ամպերի ուժի աշխատանքը՝  $A=F_U S$ :
2. Հոսանքակիր հաղորդիչն ինդուկցիայի գծերին գուգահեռ տեղադրելիս նրա վրա ազդող Ամպերի ուժը՝  $F_u=IBl$ :
3. Ինդուկցիայի գծերին գուգահեռ տեղադրված հոսանքակիր հաղորդչում հոսանքի ուժը երկու անգամ մեծացնելիս, նրա վրա ազդող ուժը մեծանում է երկու անգամ:
4. Հոսանքակիր հաղորդիչն ինդուկցիայի գծերին ուղղահայաց տեղադրելիս, նրա վրա ազդող Ամպերի ուժը զրո է:
5. Հոսանքակիր հաղորդիչն ինդուկցիայի գծերի նկատմամբ  $\alpha$  անկյան տակ տեղադրելիս Ամպերի ուժը՝  $F_u=IBl \sin \alpha$  :
6. Ինդուկցիայի գծերին գուգահեռ տեղադրված հոսանքակիր հաղորդիչը ինդուկցիայի գծերին ուղղահայաց ուղղությամբ շարժելիս մագնիսական դաշտի կատարած աշխատանքը զրո է: